Տ. ՆԱՐԵԿ ՎՐԴ. ԱՎԱԳՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ՝ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ՆՎԻՐՎԱԾ ԳԱՆՁԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՆՈՆԸ

Հայ միջնադարյան մատենագրության մեջ առանձնահատուկ տեղ ունեն Ս. Ներսես Շնորհալու (1166—1173 թթ.) ստեղծագործությունները, որոնք բովանդակային առումով խիստ ընդգրկուն եւ բազմաբնույթ են. պոեմներ, խրատական չափածո ստեղծագործություններ, ներբողյաններ, տաղեր ու գանձեր, շարականներ, Հայոց Եկեղեցու ժամակարգության մաս կազմող երգեր, հանելուկներ, խորանների եւ ավետարանական մեկնություններ եւ այլն։

Բովանդակային բազմազանության շնորհալիական ծովում առանձնանում են հատկապես երկնային զորություններին՝ զվարթուններին նվիրված ստեղծագործությունները։ Հրեշտակները հիշատակվում են Հին ու Նոր Կտակարանների չափածո մեկնություն՝ «Յիսուս Որդի» ստեղծագործության մեջ, «Յաղագս տաւնի գերագունիցն էութեանց հրեշտակապետացն Սրբոց՝ Միքայէլի եւ Գաբրիէլի եւ ամենայն երկնայնոց զաւրութեանցն» ծավալուն ներբողյանում[1] եւ վերջինիս չափածո անդրադարձը հանդիսացող մաղթանքում[2], Հրեշտակապետաց գանձարանային կանոնում, որին դեռ կանդրադառնանք։

Ներսես Շնորհալին է հեղինակը Հրեշտակապետաց կանոնի[3], ինչպես նաեւ «Շարակնոցի» կանոնում տեղ չգտած ծավալուն մի շարականի[4]։ Գաբրիել հրեշտակը հիշատակվում է անգամ հանելուկներում[5]։

Հրեշտակապետաց դասին վերաբերող այս բազմաբնույթ ստեղծագործություններում առկա հրեշտակաբանական ըմբռնումներն ու մեկ-

---

[1] *Տե՛ս «Մատենագիրք Հայոց», ԺԲ. դար, հտ. ԻԱ., «Գովեստ բանի ներբողական բացատրութեամբ ասացեալ Ներսէսի սրբազան կաթուղիկոսին Հայոց եւ տիեզերական լուսաւորչին յաղագս տաւնի գերագունիցն էութեանց հրեշտակապետացն Սրբոց՝ Միքայէլի եւ Գաբրիէլի եւ ամենայն երկնայնոց զաւրութեանցն», գիրք Ա., Երեւան, 2018, էջ 561—599։*

[2] *Տե՛ս անդ, «Տեառն Ներսէսի մաղթանք առ սուրբ հրեշտակսն», էջ 599—609։*

[3] *Տե՛ս անդ, էջ 1106—1111։*

[4] *Տե՛ս անդ, էջ 1158—1160։*

[5] *Տե՛ս անդ, էջ 1271։*

նութիւններն ի մի են հավաքվել եւ Ներսես Շնորհալի հայրապետին բնորոշ պարզությամբ, առանց երկիմաստությունների արտահայտվել «Գանձարանի»՝ հրեշտակապետներին նվիրված «Կանոնում», որը կազմված է բուն գանձից, տաղից ու փոխից։

Ս. Ներսես Շնորհալու գանձը ձեռագրերում, այդ թվում նաեւ գանձարաններում «Քարոզ» է անվանվում, քանի որ մինչեւ ԺԳ. դարը գանձերը քարոզ են կոչվել (այդպես են անվանվել ոչ միայն Ներսես Շնորհալու, այլ նաեւ Գրիգոր Նարեկացու գանձերը)[6]։ Ներսես Շնորհալի հայրապետի աղոթական այս չափածոն[7] կազմված է 12 տնից եւ ունի 262 տող։ Տների սկզբնատառերը հոդում են «Անմահից քարոզ» եզրակապը, որը նշանակում է անմահներին՝ անմարմնավոր հրեշտակներին նվիրված քարոզ։

Առաջին տան մեջ փառաբանվում է միասնական եւ անբաժանելի Սուրբ Երրորդությունը։

Գանձերի ընդունված կանոնական կառուցվածքով յուրաքանչյուր տան վերջին երկու տողերը, որպես կրկնակ, կրկնվում են ամեն տան վերջում՝ իբրեւ մաղթանք ներկայացնելով տվյալ ստեղծագործության բուն ասելիքը եւ բարեխոսական հայցվածը։ Այս գանձի տները եզրափակող կրկնակում ասվում է.

Ընկա՛լ, մարդասէր, բարերար կամաւ զնուէր մաղթանաց երկրածին մարդկան՝
Յաւր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք *(19–20 տողեր)*։

Երկնային հրեշտակներ ու երկրային մարդիկ համեմատությամբ հայցվում է, որ Աստված ընդունելի դարձնի մարդկանց խնդրանքները՝ ուղղված հրեշտակների միջոցով։ Գանձերը գրվում էին տվյալ տոնի օրը կատարելու համար։ Նույնպես եւ հրեշտակապետներին նվիրված այս ստեղծագործությունը կատարվելու էր ամեն տարի՝ երկնային զորություններին նվիրված տոնի օրը, ուստի հայցվում է, որ այդ օրվա մաղթանքն Աստված կատարի։

Երկրորդ տան մեջ, անդրադառնալով հրեշտակներին, ասվում է, որ Աստված ստեղծեց մարմնավորներին եւ անմարմիններին։ Բանաստեղծական ձեւակերպումներով ներկայացվում են հրեշտակնե-

---

[6] *Տե՛ս* Գրիգոր Նարեկացի, *Տաղեր եւ գանձեր, աշխ.՝ Ա. Քյոշկերյանի, Երեւան, 1981, էջ 23–26։*

[7] *Տե՛ս «Մատենագիրք Հայոց», ԺԲ. դար, հտ. ԻԱ., «Քարոզ սրբոց հրեշտակապետացն, արարեալ Ներսիսի Հայոց Կաթողիկոսի», գիրք Ա., էջ 884։*

րի ինը դասերը՝ երեքական խմբերի բաժանմամբ եւ յուրաքանչյուրին վերապահված գործառույթներով։

Հրեշտակների դասերի թվարկումն սկսվում է աստվածությանը մերձ գտնվողներից։ Աթոռք, Քերովբեք եւ Սերովբեք դասերից առաջինի վրա է հանգում աստվածային փառքը.

Աթոոռ հանգստեան անկարաւտիդ բազմելոյ *(տող 29)*...

Սերովբեների բազմաչյա լինելը եւ քերովբեների աստվածային սրբասացությունը շարունակ կատարելը նկատի ունենալով՝ հեղինակն ասում է.

Բազմաչեայ գունդ բերովբէից մեծ աստուածութեանդ,
Սրբասաց սերովբէ, յորմէ գոյացան հուպ եղեալք
Պակուցմամբ առ նոյնդ կայանիւ *(31–33 տողեր)*:

Հրեշտակների՝ Աստծու կողմից ստեղծված լինելը, «իշխան» եւ «իշխող» բառերի հարաբերակցությամբ, այսպես է ներկայացվում.

Յիշխանաբար իշխողէդ ստեղծան (տող 35):

Իմաստային բառախաղով են հիշատակվում նաեւ «Տէրութիւնք, Զօրութիւնք, Իշխանութիւնք» դասերը.

Տիրապէս Տէրութիւնք, զաւրութիւնք, իշխանութիւնք *(տող 34)*:

Նույն ձեւով են ներկայացվում եւ վերջին երեք՝ առավել «երկրային» ու մարդկանց հետ հարաբերվող դասերը.

Միջինք երկնայնոցն պետութիւնք, հրեշտակապետք եւ հրեշտակք *(տող 36)*:

Հրեշտակների ինը դասերի երեք խմբի բաժանվելը եւ ունեցած գործառույթները այսպես են բնորոշվում.

Ինեակ դասուցդ անմահիցդ
Կարգեցեր երիս բահանայապետութիւնս.
Կատարիչ, լուսաւորիչ, մաքրիչ առողս եւ բաշխողս
Զգիտութիւն ծորես միջոցաւ, զլոյս՝ նախնեաւքն առ վերջինս *(38–41 տողեր)*...

Հրեշտակներն «առնող եւ բաշխող» են անվանվում, քանի որ նրանց զորությունն Աստծուց է. նրանք աստվածային շնորհի ստացողն ու փոխանցողն են։ Հրեշտակները կատարում են աստվածային կամքը։ Հրեշտակապետների՝ Աստծու եւ մարդկանց միջեւ միջնորդ լինելու, շնորհները բաշխելու, աստվածային սաստով խրատելու մասին Ս. Ներսես Շնորհալին գրում է նաեւ հետեւյալ տողերում.

Պահապանք միջնորդք խաղցրութեան սաստից եւ սպառնման *(տող 66)*:

Հրեշտակները, ինը դասի բաժանվելով, միաժամանակ աստվածային հավաքական զորքն են։ Հայ մատենագրության սկզբնավորման արշալույսին այս ըմբռնումը լավագույնս արտահայտվել է Ագաթանգեղոսի «Հայոց պատմության»՝ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին վերաբերող հետեւյալ տողերում. «Եւ լոյսն հոսեալ վերն ի վայր մինչեւ յերկիր հասանէր. եւ ընդ լուսոյն՝ զօրք անչափք լուսեղէնք երկթեւեանք ի տեսիլ մարդկան, եւ թեւքն իբրեւ զհուր»[8]։

Շարականագիր եւ գանձասաց կաթողիկոսը նույն այս ըմբռնմամբ գրում է.

Կարգեցեր հազարք հազարաց եւ բիւրք բիւրուց,
Առ դուրս հզաւրիդ միշտ արթուն զինուորս ահաւորք *(45–46 տողեր)*:

68–146-րդ տողերում 25 վկայակոչումներով ներկայացված են Հին եւ Նոր Կտակարանների հիշատակությունները հրեշտակների մասին։ Ընդ որում, այդ հատվածները բերվում են ոչ թե չափածո համառոտ վերաշարադրմամբ կամ թվարկմամբ, այլ Ս. Ներսես Շնորհալին, ինչպես իր մյուս ստեղծագործություններում, այստեղ եւս ներկայացնում է սուրբգրային տվյալ հատվածին վերաբերող հոգեւոր խորհուրդը՝ ըստ միջնադարյան մեկնությունների։

Թվարկումների շարքը, բնականաբար, սկսվում է Ադամին դրախտից վտարելուց հետո՝ «Ծննդոց» գրքի հետեւյալ խոսքերով. «Եւ հրամայեաց քերոբէից եւ բոցեղէն սրոյ՝ շուրջանակի պահել զճանապարհս ծառոյն կենաց» (Ծնունդ. Գ. 24)։ Ս. Ներսես Շնորհալին հիշյալ խոսքերն այսպես է մեկնաբանում.

Սրովբէն հրանիթ զկենացն տունկ պահէր,
Զի մի՛ պատրեալն Ադամ կերեալ մշտասցի մահուամբն անյաջորդ *(68–69 տողեր)*:

Համաձայն այս մեկնության՝ Աստված, հրեղեն սրով դրախտը պահպանելով, Ադամին ոչ թե պատժում է, այլ հակառակը. Ադամին թույլ չի տրվում դրախտ մտնել, որպեսզի նա ոչ թե անմահ մնա, անզավակ լինելով, այլ որպես մահկանացու՝ զավակ ունենա, եւ շարունակվի մարդկային սերունդը։

---

[8] *«Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», աշխ.՝ Ա. Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1983, էջ 414։*

Աբելի սպանությունից հետո Աստծու՝ Կայենին ուղղված «Ո՞ւր է Հաբէլ եղբայր քո» (Ծննդ. Դ. 9) հարցը, ըստ Ս. Ներսես Շնորհալու, տրվել է հրեշտակի միջոցով.

Ի դիմաց Արարչիդ հարցողիս զՀաբէլի մահուն
Ընդ սպանողն առաջին եղբայրն Կայէն *(70–71 տողեր)*:

Այստեղ արտահայտվել է այն միտքը, որ Աստված մարդկանց հետ խոսում է հրեշտակների միջոցով։ Ենովքի երկինք փոխադրվելը (հմմտ. Ծննդ. Ե. 22–24, Եբր. ԺԱ. 5) դարձյալ ներկայացվում է որպես հրեշտակների միջոցով կատարված։

Չորրորդ վկայությունը վերաբերում է Հին Կտակարանի երրորդությանը՝ Մամբրեի կաղնու ներքո երեք այրերի՝ Աբրահամին երեւալուն եւ Իսահակի ծնվելու ավետիսը տալուն (Ծննդ. ԺԸ. 1–15).

Աբրահամեան խորանին բնակողիս եւ կերողիս որթոյն
Եւ տուիչիս աւետեաց որդիս ունելոյ *(73–74 տողեր)*:

Հինգերորդը վերաբերում է Ղովտին Սոդոմից հանելուն եւ Սոդոմն ու Գոմորը կործանելուն (Ծննդ. ԺԹ. 12–25)։ Սուրբ Գրքում թեեւ ասվում է, որ երկու քաղաքները կործանվեցին երկնքից տեղացած ծծմբով ու հրով, Ս Ներսես Շնորհալին, աստվածային պատիժը համարելով մարդկության համար կազդուրիչ, գրում է.

Եւ ըզնոյն պատժողիս ցաւղաբեր հրով յերկնից տեղացեալ *(տող 76)*:

Ըստ Հայոց հայրապետի՝ որպես աստվածային կամքի կատարում՝ հրեշտակների կողմից տեղացած հրով են կործանվել այդ երկու քաղաքները։

Աբրահամի՝ աստվածային պատվերի համաձայն Իսահակին ողջակեզ մատուցելը փոխարինվեց խոյի զոհաբերությամբ, եւ այդ մասին հայտնեց հրեշտակը (Ծննդ. ԻԲ. 11–13).

Ի հայրազէն մահուանէն զերծողիս պատանւոյն Սահակայ
Եւ զխոյն փոխանակ պատրաստողիս *(77–78 տողեր)*:

Յոթերորդ վկայությունը կապվում է Հակոբի սանդուղքի հետ. այդ մասին ասվում է, թե Հակոբ նահապետը երազում մի սանդուղք է տեսնում, որով Աստծու հրեշտակները ելնում եւ իջնում էին երկիր (հմմտ. Ծննդ. ԻԸ. 12).

Յակոբայ սանդղոյն ելողիս
Եւ իջիչիս յերկնից յաշխարհ առ մարդիկ *(79–80 տողեր)*:

Հովսեփ Գեղեցիկի՝ եգիպտուհու կողմից հանիրավի ամբաստանվելը եւ բանտ նետվելը, ապա նաեւ աստվածային շնորհով այնտեղ ողջ մնալը նկարագրող հատվածում որեւէ ուղղակի հիշատակություն չկա հրեշտակների մասին, այլ ասվում է. «Եւ էր Տէր ընդ Յովսեփայ, եւ արկ զնովաւ ողորմութիւն, եւ ետ նմա շնորհս առաջի բանտապետին» (Ծննդ. Լթ. 21)։ Ս. Ներսես Շնորհալին այստեղ եւս մեկնում է, որ երկնային շնորհի եւ զորության փոխանցումը Հովսեփին կատարվում է հրեշտակի միջոցով։ Ասվածը վերաբերում է նաեւ Հովսեփի՝ փարավոնի երազի բացատրությանը (հմմտ. Ծննդ. Խ.).

Յեգիպտուհւոյն փրկողք Յովսեփայ,
Եւ զանուրջսն նովաւ հանեալ ի բանտէն յայտնիչք արքային *(81–82 տողեր)*:

Ս. Ներսես Շնորհալին անգամ անկեզ մորենու դրվագն է կապում հրեշտակների հետ (հմմտ. Ելք. Գ. 2–4, գանձ 85–87 տողեր)։

Եգիպտոսից ելքի ժամանակ անդրանիկ զավակներին հարվածելու մասին գրված է. «Եւ Տէր եհար զամենայն անդրանիկ յերկրին Եգիպտացւոց» (Ելք. ԺԳ. 29)։ Այս տողերը եւս ներկայացվում են առարկայական պատկերով՝ Տիրոջ առաքած հրեշտակներն են պատուհասում նրանց.

Առաքէր զուարթունսն ի դիմաց մեծիդ Աստուծոյ
Անդրանկացն Եգիպտոսի սատակիչք *(88–89 տողեր)*...

Ժողովրդին Եգիպտոսից դեպի Ավետյաց երկիր առաջնորդում էին «սիւն ամպոյն» եւ «սիւն հրոյն» (հմմտ. Ելք ԺԳ. 21–22), որոնք եւս, ըստ Ս. Ներսես Շնորհալու, ժողովրդին առաջնորդող նույն հրեշտակներն էին.

Եւ հանիչք ժողովրդեանն յանապատ *(տող 90)*...

Նույնը վերաբերում է Կարմիր ծովն անցնելուն (հմմտ. Ելք ԺԴ. 23–25).

Ընդ ծովն անցեալ խորագոյն, ուր զփարաւոն հեղձեալ զաւրութեամբ (տող 91)...

Հայոց հայրապետը Դանիելի մարգարեության «Եւ ահա Միքայէլ, մի յառաջին իշխանացն, եկն օգնել ինձ» (Ժ. 13) խոսքերը կապում է Մովսեսի հետ, երբ գրում է Ավետյաց երկիր գնալու մասին.

Ի տիպն երկնից գաւառացդ,
Որոց Միքայէլ իշխան ըստ Մովսէսի բաժանմանցն (95–96 տողեր)...

Եգիպտացիների սպառազինված փարավոնի առաջնորդությամբ Կարմիր ծովը մտնելուց կառքերի անիվների կապվելը (հմմտ. Ելք ԺԵ. 25)

եւս բացատրվում է որպես հրեշտակային ազդմամբ կատարված ու Եզեկիելի մարգարեության չորեքկերպյան կառքի հետ զուգահեռով (հմմտ. գանձ 102—103 տողեր)։

Տիրոջ հրեշտակի միջոցով Եգիպտոսից ելքով իրականացված է համարվում Մովսես մարգարեի այն հրահանգը, որ եբրայեցիները զատկական գառան արյամբ նշան անեն իրենց տան սեմին, որպեսզի երբ Տերն անցնի «հարկանել զեգիպտացիսն» (հմմտ. Ելք ԺԲ. 23), չհարվածի նրանց.

Պատժատէ առանց ճեստելոց եւ դրիչ նշան ի ճակատ արդարոցն *(տող 104)*...

Եղիայի երկնային կառքով համբառնալը (հմմտ. Դ. Թագ. Բ. 11—12) նույնպես համարվում է հրեշտակների միջոցով իրականացած.

Հրանիւթ անուամբ զՀեղիաս յաշխարհն ամբարձին կենդանեաց,
Եւ բիւրք բանակէին շուրջ զեղիսէիւ *(105—106 տողեր)*:

Երկար այս թվարկման մեջ 17-րդ վկայակոչումն արդեն ուղղակիորեն վերաբերում է հրեշտակներին։ Եսայիի մարգարեության մեջ նկարագրվում է, որ Տիրոջ հրեշտակն ունելիով սրբում է մարգարեի շրթունքները՝ ասելով. «Ահաւադիկ մերձեցաւ այդ ի շրթունս քո» (Զ. 6)։ Ս. Ներսես Շնորհալին մարգարեության այս տողը ներկայացնում է հետեւյալ շարադրանքով.

Եսայեայ ունելեամբ բերեալ սրովբէն կայծակն
Ի շրթունս մաքրիչ պղծութեանց ճամաւէն դասուց տեսողացն,
Երկնայինքդ՝ ուսուցիչք նոցա եւ զեղեալսն ճառողք *(107—109 տողեր)*:

Ս. Ներսես Շնորհալի հայրապետն այստեղ ոչ միայն գեղարվեստորեն ներկայացնում է մարգարեության այդ դրվագը, այլ նաեւ մեկնողական ընդհանրացմամբ ասում է, որ այն խորհրդանշում է ողջ տեսանողների՝ մարգարեից դասի շրթունքների մաքրումը պղծությունից, ու «երկնայինքդ»՝ հրեշտակաց դասը, դարձավ մարգարեների ուսուցիչը եւ կատարվածների՝ եղելությունների մասին ասողը։

Հինգերորդ տնով ավարտվում են հրեշտակներին վերաբերող հինկտակարանյան հիշատակությունները, եւ վեցերորդ ու յոթներորդ տներում թվարկվում են նորկտակարանյան վկայությունները։

Շարքը, բնականաբար, սկսվում է Գաբրիել հրեշտակապետով, որն անվանվում է «պետն հրեղինաց».

Պետն հրեղինաց Գաբրիէլ բերեալ աւետիս Մարիամու՝
Ծնանիլ կուսութեամբ զՏէրդ եւ զծնեալդ աներ ի Հաւրէ *(114–115 տողեր)*:

Ավետարանական համապատում ընթացքով առաջինը հիշվում է հրեշտակի՝ Զաքարիային տված ավետիսը (հմմտ. Ղուկ. Ա. 13–20)։ Ս. Ներսես Շնորհալին, սակայն, իմաստային առումով կարեւորելով սուրբծննդյան ավետիսը, առաջինն այն է հնչեցնում, ապա՝ Զաքարիա քահանայապետին տրվածը։ Զարմանալիորեն չի հիշվում հրեշտակի երեւալը Հովսեփին (հմմտ. Մատթ. Ա. 20)։ Ըստ երեւույթին՝ Հովսեփին երեւալը դիտարկվել է որպես սուրբծննդյան ավետման մաս։

Ավետարանական համապատում նույն ընթացքով հաջորդը հովիվներին տրված ավետիսն էր։ Ղուկասի Ավետարանի Բ. գլխի 8–15-րդ համարները Ս. Ներսես Շնորհալին խտացրել է հետեւյալ տողերում.

Ի ծննդեանն աւետաբերք բացաւթեայ հովուացն
Եւ երգիչք փառացդ Աստուծոյ *(119–120 տողեր)*:

Հովսեփին տրված՝ մանուկ Հիսուսին Եգիպտոս տանելու, ապա հետ բերելու վերաբերյալ հրեշտակային պատվերի հատվածը (հմմտ. Մատթ. Բ. 13–15, 19–23) Ս. Ներսես Շնորհալին խտացրել է երեք տողում.

Յեգիպտոս երեւեալ զմանուկդ հինաւուրց
Զուարթուն Յովսեփայ տանել դեռածին
Եւ նոյն տեսլեամբ դառնալ անդուստ ի Սաղիմ *(121–123 տողեր)*:

«Զմանուկդ հինաւուրց» կապակցությամբ պատկերային գեղարվեստական հակադրություն է ստեղծվել մանուկ եւ հինավուրց բառերի զուգադրմամբ։

Գեթսեմանիի պարտեզում աղոթքի ժամանակ Քրիստոսի՝ Հորն ուղղված խոսքերը գանձում այսպես են ներկայացվել.

Ի սաստկագոյն պակուցման երկիւղէ մահուն
Փրկագործ զաւրացուցիչք լինէին զաւրացուցչիդ երկնաւորաց եւ երկրաւորաց
(127–128 տողեր):

Ս. Ներսես Շնորհալի հայրապետն այս հատվածը վարպետորեն կառուցել է Ավետարանում գործածված եւ հրեշտակի հետ կապվող «զօրացուցանէր» բառով, թե հրեշտակները զորացնում էին Նրան, ով զորացնողն էր երկրայինների ու երկնայինների։

Նկատի ունենալով հրեշտակների տված Ս. Հարության ավետիսը՝ Հայոց հայրապետը հրեշտակներին անվանում է նաեւ Ս. Գերեզմանի պահապաններ եւ Ս. Հարության քարոզողներ.

Գերեզմանի անմահիդ պահապանք,
Եւ կանանցն իւղաբերից քարոզք յարութեան զմարդիկ յանողիդ *(129–130 տողեր)*:

Քրիստոսի համբարձման վերաբերյալ միջնադարյան մեկնողական գրականության մեջ ասվում է, որ այն կատարվեց հրեշտակների սպասավորությամբ եւ օրհնությամբ։ Նման մեկնությունն իր արտահայտությունն է գտել նաեւ Համբարձման պատկերագրության մեջ։ Հետեւելով մեկնողական այս ավանդույթին եւ Քրիստոսի համբարձումը համեմատելով Եղիայի՝ քառակերպյան կառքով երկինք տարվելու հետ՝ Ս. Ներսես Շնորհալին գրում է.

Վերացման մարմնով հզաւրիդ համբարձիչք,
Եւ կարք քառակերպեան ըստ մարգարէին
Ածողք յերկինս ի ծոցն Աստուծոյ *(131–133 տողեր)*:

Ս. Ներսես Շնորհալին, Քրիստոսի համբարձմամբ ավարտելով գանձի վեցերորդ տունը, յոթերորդում ներկայացնում է հրեշտակներին վերաբերող երեք դրվագ, որոնք կապվում են «Գործք առաքելոց»-ի հետ։ Նախ՝ մեկ անգամ եւս ընդգծում է, որ բոլոր հրաշքները հրեշտակների միջոցով են իրականանում.

Զմեծիցն առ քեզ, Աստուած բոլորից հրաշից,
Առ մեզ նոքաւ ներգործիչ (137–138 տողեր):

Այնուհետեւ՝ հիշում է առաքյալներին բանտից հանելու դրվագը (հմմտ. Գործք Ե. 19–20), Փիլիպոս առաքյալի կողմից եթովպացի ներքինիին մկրտելու պատմությունը (հմմտ. Գործք Ը. 26–40).

ՑՓիլիպոս խաւսեալ հրեշտակին ի կաոս յարեալ ներքինւոյն
Եւ վերածնեալ զնոյն յորդիս Աստուծոյ *(144–145 տողեր)*:

Գանձում հրեշտակների հիշատակության շարքն ավարտվում է Կոռնելիոս հարյուրապետի աղոթքով (հմմտ. Գործք Ժ. 30–33).

Կուռնելիոսի երեւեալ զուարթունն աղաւթից նորա,
Եւ ողորմութեան ածիչն առաջի Քո, Յիսուս մարդասէր *(146 տող)*:

Հեղինակը հաջորդ տողից «Գործք առաքելոց»-ից անցում է կատարում եկեղեցական սրբազան Ավանդությանը՝ գրելով Տիրամոր վերափոխման ժամանակ հրեշտակների սպասավորության մասին.

Դու բազմութեամբ իջեալ զաւրաւ հրեշտակաց
Ի փոխումն Իսկուհւոյն,
Աստուած սրովբէից Յիսուս եւ Տէր քրովբէից *(151–153 տողեր)*:

Ս. Ներսես Շնորհալին անդրադառնում է հրեշտակների վերաբերյալ սրբախոսական գրականության մեջ առկա տարբեր վկայակոչումներին, հատկապես՝ Միքայել հրեշտակապետի կատարած հրաշագործություններին։

Հաջորդ տներում մեկ անգամ եւս հիշվում են հրեշտակների ինը դասերն իրենց անվանումներով ու գործառույթներով։

Գանձերի վերջին տան մեջ օրվա տոնի հոգեւոր խորհրդին համահունչ բարեխոսական հայցվածն է ուղղվում առ Աստված։ Սույն գանձում, որպեսզի հրեշտակների բարեխոսությունն ավելի ազդու լինի, Ս. Ներսես Շնորհալի հայրապետը նրանց ասում է, որ մարդիկ ձեր փոքր եղբայրներն են.

Մարդիկս երկրածինք՝ փոքունս ձեր եղբարք *(տող 229)*:

Ս. Ներսես Շնորհալին, պահապան հրեշտակներին ապավինելով, մաղթում է, որ երկնային զորությունները մարդկանց հետ լինեն օրվա բոլոր ժամերին ու բոլոր իրավիճակներում։

Հայոց հայրապետը, գանձից բացի, գրել է նաեւ երկնային զորություններին նվիրված տաղ։ Այն ընդունված կարգով հաջորդում է գանձին եւ ունի «Տաղ սրբոց հրեշտակապետացն» խորագիրը[9]։ Ինչպես որ գանձին բնորոշ է տվյալ տոնի պատմությունը դիպաշարային (սյուժետ) համապատասխան դրվագների թվարկմամբ ներկայացնելը, այնպես եւ տաղին բնորոշ են առավել հուզականությունն ու դեպքերի պատմողական ընթացքի փոխարեն տոնի խորհրդի վերաբերյալ հոգեւոր զգացմունքներ եւ ապրումներ արտահայտելը[10]։

Նույն օրինաչափությամբ է գրված նաեւ Ս. Ներսես Շնորհալու այս տաղը։ Այն կարծես գանձի մանրակերտը լինի, ուր Հայոց հայրարպետը,

---

[9] *Տե՛ս «Մատենագիրք Հայոց», ԺԲ. դար, հտ. ԻԱ., «Տաղ սրբոց հրեշտակապետացն, ի Ներսիսէ կաթողիկոսէ», գիրք Ա., էջ 801–802։*

[10] *Տե՛ս* Գրիգոր Նարեկացի, *Տաղեր եւ գանձեր, էջ 32–33։*

պատմողական ընթացքին զուգահեռ, իր վերաբերմունքն է արտահայտում այս կամ այն իրադարձության հանդեպ։

Իր մի շարք խրատական չափածո ստեղծագործությունների եւ տաղերի նման՝ այս մեկը եւս Ս. Ներսես Շնորհալին գրել է այբբենական եզրակապով, որով տաղն ունենում է 36 տող եւ երկուական տողերով 18 տուն։ Առաջին տողի առաջին բառն սկսվում է Ա-ով, իսկ վերջին տողի սկզբնատառն է լինում Ք-ն։

Հիշյալ տողն սկսվում է Սուրբ Երրորդության փառաբանությամբ, ապա նույն ձեւով ներկայացվում են հրեշտակների ինը դասերը՝ երեք խմբավորմամբ։ Երրորդ եւ չորրորդ տողերում ներկայացվում են առաջին երեք դասերը, եւ ընդգծվում է նրանց գերագահ լինելը.

Գերագոյն գոլով հուպ իւական փառաց տեսողք՝
Դասք սերովբէիցն եւ քերովբէէ, հոյլք աթոռոցն *(3–4 տողեր)*։

Իրար հաջորդող մյուս երկու տներով եւ իմաստային վարպետ բառախաղով՝ կապված հրեշտակների դասի բնորոշման հետ, ըստ աստիճանակարգի ներկայացվում են մյուս երկու խմբերը.

Երկրորդ պարունակ պարագրելոց սոքումբք վեհից՝
Ջաւրութեանցըն խումբք իշխանութեանց եւ տէրութեանց *(5–6 տողեր)*։

Էրրորդ հուսկ յետոյ՝ պետականացըն պետութիւն,
Ընդ հրեշտակապետսն եւ հրեշտակացըն բազմութիւնք *(7–8 տողեր)*։

Ինչպես գանձում, այնպես եւ այստեղ աստվածաբանական այն դրույթն է ընդգծվում, որ հրեշտակներն աստվածայինի փոխանցողն են մարդկանց.

Ի Հաւրէն լուսոյ լոյս գիտութեան միշտ ընկալեալք,
Լոյս իմաստութեան որդւոց մարդկան վերաբերողք *(11–12 տողեր)*։

Ի տարբերություն գանձի, որտեղ ներկայացվում էին հրեշտակներին վերաբերող հին եւ նորկտակարանյան դրվագները՝ այստեղ չորս իրադարձություն է հիշատակվում. առաջին՝ հրեշտակները մարտնչեցին Աստծու դեմ ապստամբած սատանայի հետ, եւ վերջինս ու նրա կողմն անցած ըմբոստ հրեշտակները երկնքից նետվեցին երկրային խորխորատները, երկրորդ՝ Գաբրիել հրեշտակապետի ավետիսը Ամենասրբուհի կույս Մարիամին, երրորդ՝ հովիվներին հայտնած բարի լուրը, չորրորդ՝ հրեշտակի՝ Յուղաբերից կանանց տրված Ս. Հարության ավետիսը։

Ս. Ներսես Շնորհալու՝ հրեշտակապետաց դասին նվիրված կանոնը եզրափակվում է տաղին հաջորդող փոխով (ձեռագրերում եւս այն հաջորդում է տաղին) եւ ունի 30 տող[11]։

Բանաստեղծ կաթողիկոսի սիրած եզրակապերից էր «Ներսէսի է այս բանս» արտահայտությունը։ Հրեշտակապետաց կանոնի փոխը եւս ունի այս անձինքը (ակրոստիքոս)։ Այս փոխն առավել ընդգծված տոնախոսական բնույթ եւ բարեխոսական ուղղվածություն ունի։ Ս. Ներսես Շնորհալին հրեշտակներին բնորոշում է որպես «մարդասէր հոգիք» (տող 12)։

Ս. Ներսես Շնորհալին, աստվածության աթոռի առջեւ հրեշտակային երեքսրբյան ասացությունը նկատի ունենալով՝ «Սուրբ, Սուրբ, Սուրբ ես Տէր զօրութեանց», գրում է.

Սրբասաց ձայնիւ վերագոչեմք ընդ ձեզ,
Սուրբ հրեշտակապետք, զերեքսրբեան նրաւագս *(21–22 տողեր)*։

Նա դիմում է Միքայել եւ Գաբրիել հրեշտակապետներին, որ իրենց տոնի օրը մարդկության համար բարեխոս լինեն։

Հայ հոգեւոր ու մեկնողական գրականության մեջ հաջորդ հեղինակը, որը մեկնողական գրականության շրջանակում ուներ Ս. Ներսես Շնորհալու ստեղծագործություններին բնորոշ բովանդակային ընդգրկում, Ս. Գրիգոր Տաթեւացին էր։ Ս. Ներսես Շնորհալուց հետո Ս. Գրիգոր Տաթեւացուն էր վերապահված հրեշտակաբանության բնագավառում եւս ամփոփելու եւ ի մի բերելու հայոց միջնադարի մատենագրական ողջ ժառանգությունը։ Հայոց Եկեղեցու եռամեծ վարդապետի վերլուծական մտքին բնորոշ հանդարտ, արտաքուստ չոր թվացող եւ իրար հաջորդող մեկնողական թվարկումներում՝ հրեշտակներին վերաբերող բացատրություններում, որոշակիորեն նկատելի է Ս. Ներսես Շնորհալու բանաստեղծական շունչը[12]։

РЕЗЮМЕ

В статье отмечается, что Св. Нерсес Шнорали (Католикос 1166—1173 гг.), будучи наиболее тематически и жанрово разнообразным автором армянско-

[11] *Տե՛ս անդ, էջ 803–804։*

[12] *Տե՛ս* Գրիգոր Տաթեւացի, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 564–583.* Գրիգոր Տաթեւացի, *Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 130–146։*

го средневековья, в нескольких своих произведениях обратился к вопросам ангелологии.

Произведения Св. Нерсеса Шнорали на эту тему нашли свое художественное, целостное выражение в каноне сборника «Гандзаран» (сборник од-молитв), посвященном св. Архангелам. Он состоит из гандза (поющаяся ода-молитва), тага (песня) и поха (композиционная часть тага).

Отмечается, что в рамках канонической структуры, присущей гандзам, Св. Нерсес с художественной выразительностью и богословскими определениями представляет упоминания ангелов в Ветхом и Новом Заветах.

Гандзы в Церкви исполняются в дни соответствующего праздника, поэтому Св. Нерсес Шнорали просит ангелов в день их праздника еще больше ходатайствовать и оберегать людей.

SUMMARY

The article states that St. Nerses the Graceful (Catholicos from 1166 to 1173), being the most versatile Armenian medieval author in thematic and genre terms, addressed the issues of Angeology in several of his works. St. Nerses' works on this theme have found their artistic and complete expression in the canon dedicated to the rank of Holy Archangels in "Gandzaran (Treasury)" collection of works. The canon consists of a gandz-hymn, canticle and antiphone, which are analyzed in detail in this article.

It mentions that within the framework of the typical canonical structure of a gandz-hymn, St. Nerses the Graceful presents the references to angels in the Old and New Testaments with artistic imagery and theological descriptions.

Gandz-hymns are performed in the Church on the day of the respective feast, so St. Nerses the Graceful asks the angels to intercede for and guard people more on their feast day.